# ՆՐԱ ՆՎԻՐՈՒՄԸ ԾՆՎԵԼ Է ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ԺԱՄԻՆ



Շարժումն սկսվելու առաջին օրերից 19-ամյա պատանին բռնեց պարտիզանական պայքարի ուղին: Կամավորական ջոկատների ակտիվ մասնակից էր: Կռվեց անձնուրաց, աչքի ընկավ ճարպկությամբ ու հայրենասերին բնորոշ ոգևորությամբ: Ավելի քան երկու տարի խրամատներից դուրս չեկավ: Արհամարհելով ձմեռվա սառնամանիքը, ամառվա տոթն ու տապը, Նիկոլայ Առուստամյանն ապրեց բաց երկնքի տակ և իր քաջասիրտ ու համարձակ զինվոր տղերքի հետ ոչ մի թիզ հող չզիջեց թշնամուն: Որովհետև բոլորն էլ կռվում էին հաղթանակի հավատով: Որովհետև այդ կռվում ժողովրդի բախտն ու ճակատագիրն էր որոշվում: Ազգի ճակատագիրը...

1990 թվականին, երբ Հայաստանում ստեղծվեց հատուկ զինվորական գունդ, որտեղ ընդգրկված էր նաև Գորիսի զինվորական վաշտը, 21-ամյա Նիկոլայը նշանակվեց վաշտի հրամանատարի տեղակալ: Գորիսի ինքնապաշտպանության ջոկատների զինվորներից կազմված այդ վաշտի հիմնական նպատակը շրջանի սահմանամերձ տարածքները թշնամու հարձակումներից պաշտպանելն էր:

Տարիների փորձից գիտեր, որ բանակում առաջին խնդիրը մարտական պատրաստականությունն է, ֆիզիկական կոփվածությունն ու կարգ ու կանոնը: Եվ այդ հաստատ համոզվածությամբ էլ ամեն ինչ անում էր՝ լավագույն արդյունքի հասնելու համար: Եվ դա նրան հաջողվում էր: Քանի՜-քանի մրցույթ-ստուգատեսում այդ վաշտը արժանացավ մրցանակների:

Մեկ տարի անց, զինվորական բարձր պատրաստականություն և ակտիվություն ցուցաբերելու համար Նիկոլայ Առուստամյանը նշանակվեց նույն վաշտի հրամանատար:

1992-ին հանրապետությունում կազմավորվեց սահմանապահ զորքերի վարչություն, որի կազմում որպես Գորիսի պարետություն ընդգրկվեց նրա ղեկավարած վաշտը, իսկ Նիկոլայ Առուստամյանը նշանակվեց պարետի տեղակալ: Մեկ տարի անց, երբ պարետությունը վերակազմավորվեց և դարձավ Գորիսի N զորամասի 2-րդ մոտոհրաձգային գումարտակ, Նիկոլայ Առուստամյանը նշանակվեց հրամանատար:

Բոլորովին վերջերս ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Արմավիրում կազմակերպված հրամանատարների ռազմական պատրաստականության ստուգատեսում, լավագույն արդյունքի համար նախարար Վազգեն Սարգսյանը մի խումբ զորահրամանատարների շնորհեց սպայական նոր աստիճաններ: Մայոր Նիկոլայ Առուստամյանն արժանացավ փոխգնդապետի աստիճանի:

Այժմ նա Գորիսի զորամասի թիկունքի պետն է: Իր ենթակաների համար ծառայում է որպես նպատակասլացության, գործարարության, կազմակերպվածության ռացիոնալ մտահղացման օրինակ: Նրա անձնական հմայքը, պարզությունն ու կրքոտությունը ոգեշնչում են բոլոր զինվորներին՝ սրբորեն կատարելու ամեն մի առաջադրանք:

Մի առիթով Նիկոլայ Առուստամյանը, դիմելով նորակոչիկների ծնողներին, ասել է.

- Երեխաներին խռոված հոգով մի ճանապարհեք բանակ: Պարտված հոգում նստած է դասալիքը: Կամա, թե ակամա մեր առաջին խնդիրը դառնում է տղաներին այդ ընկճված վիճակից հանելը, ազատ կամք ու ոգի ներարկելը, հետո նոր միայն զինվորական գործի ուսուցումը: Ինչ վերաբերում է բանակին, ապա պետք է անկեղծ խոստովանեմ, որ մեր կազմավորված բանակը պատրաստ է, ինչպես հարկն է, դիմակայելու հակառակորդին...

Այս խոսքերը նա ասաց մեծ հավատով ու ներշնչանքով, իր գործի բովանդակ պատասխանատվությունը գիտակցող հրամանատարի պաթոսով:

Հենց այդ նվիրումով ու երախտագիտությամբ է այսօր աշխատում Գորիսի զորամասի թիկունքի պետ, փոխգնդապետ Նիկոլայ Առուստամյանը: Ապրում է զինվորների հետ, նրանց առօրյայով, նրանց հոգսերով: Նա համոզված է, որ բոլոր հրամանատարներն ու պետերը զինվորով են հրամանատարներ ու պետեր...

*Ալբերտ*
*ԳԱՍՊԱՐՅԱՆ*